



ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՑ

ԱՐՀԻ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊՍԿ. ՆԱԶԼԵԱՆԻ

ԵՒ

ԱՐՀԻ. ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵՊՍԿ. ՔԵՏԻՃԵԱՆԻ

Հայ Կաթողիկէ Նուիրաբեռութիւնը երկու մեծ սուղերով համակուած կատարեց խաչմերկի ութօրեայ տօնախմբութիւնը: Սեւ հսկայ խաչ մը կարծես տեսանք բոլորս, երբ տարածուեցաւ բօթը երկու մեծ կորուստներուն: Խաչի հըսկումի գիշերը իր մահկանացուն կնքած էր Յովհաննէս Արքեպիսկոպոս Նազլեան, Պապատաղի մէջ ի Լիբանան, ալեւոր եւ բազմալաստակ (15 Սեպտեմբեր): Երկու օր վերջ գոյթ մը Հոռոմէն անհուն կսկիծով դարձեալ կը լեցնէր արդէն վշտակոծ մեր սրտերը: Հանգեաւ ի Տէր Արհ. Պետրոս Արքեպիսկոպոս Քետիճեան (17 Սեպտեմբեր):

Խորին յարգանքով, արցունքով կը խոնարհինք անոնց թարմ հողակոյտերուն վրայ, ուր իջած է հիմա ցօղն աստուածային օրհնութեան, յաւերժական երանութեան անթառամ ծաղիկները բուսցընելու: Վստահ ենք թէ վարձահատոյց եւ բարեգութ Արարիչը՝ անմահական պսակներով օրհնած է անոնց խոնջ ճակատները: Ու մենք անոնց օրինակէն, սքանչելի օրինակէն քաջալերուած, կը հայցենք որ նորանոր հովիւներ յարուցանէ Աստուած՝ միշտ աւելի բարեգարդելու համար Քաջ Հովուին փոքրիկ հօտը: Այս է մեր ցաւակցական մաղթանքը, զոր անհուն վիշտով կը ներկայացնենք Հայ Կաթողիկէ Նուիրաբեռութեան եւ Անոր արժանաւոր Հովուապետին, այս տխուր առիթով:

Աւելի քան պարտականութիւն մըն է

մեզի համար՝ ծանօթացնել անոնց կեանքը ու գործունէութիւնը, որ ուրիշ բան չէ եղած, բայց եթէ տեւական նուիրում մը եկեղեցիին ու Ազգիին: Երկու գիտաւորներ են անոնք հիմա, որոնց լուսաշող ծիրին մէջ կը նշմարենք յարատեւ գոհողութեան եւ վեհանձն սիրոյ գեղեցիկ ու փայլուն օրինակներ, առինքնող ու դիւթիչ:

* * *

Ալեքիան Հայրապետ մը, եկեղեցական ու գրական հսկայ անցեալ մը ուսին, քարոզական, վարչական եւ ուսուցչական պերագանց վաստակով բեռնաւոր, որ չի գիտեր կքիլ տարիներու դաժան լուծին տակ. ահա՛ Գերպո՛. Նազլեան Արքեպիսկոպոս, իր վերջին օրերուն: Մտքով արթուն, յիշողութեամբ կորովի, ան կը ներկայացնէր հայրենի գարուններու կենսայորդ թարմութիւնը: Եւ մեռաւ, աւելի ճիշտ՝ սպասեց մահուան, գրիչը ձեռքին, թաղուած երկնային խոկումներու անդորր երանութեան մէջ, քրքրելով միշտ պատմական յուշերը մեր փառաւոր անցեալին: Ու կտա՛կը սքանչելի... անրասիր օրինակ կը ճշմարիտ եկեղեցականի. ազգասէր եկեղեցականի:

Մեզիբէի մէջ (Խարբերդ), 1875ի Յուլիոս 16/29ին բացած է ան իր աչքերը, մեր բնագաւառի չքնաղ արեւուն տակ: Վայլած է անոր սքանչելի եւ դալարագեղ բնակարը՝ Հաղար Պապայի


դադաթէն, արչալոյսի ոսկեծիր շառայլներուն տակ, դէպի Ծովք ուխտագնացութեան մը ընթացքին. ու Ս. Ներսէս Ծնորհալիի ջրասոյղ Հայրապետանոցին ի տես հրճուած է ապագայ եկեղեցակահին սիրտը մանկական:

Փոքրիկ հասակէն նուիրուելով քահանայական պիճակին, կ'անցնէր Պոլիս եւ հուսկ Հոռոմ. կը յաճախէ Ուրբանեան Վարժարանը. փայլուն նիշերով կը ստանայ փլիսոփայութեան եւ աստուածաբանութեան Մագիստրոսական տիտղոս. 1898ին կ'ընդունի քահանայական սուրբ օծումը: Կը դասախօսէ Հոռոմի Քահանայապետական Հայ Վարժարանին մէջ. ապա կ'անցնէ Խարբերդ, դարպասնելով թեմին դպրոցները եւ նուիրուելով քարոզութեան:

1904ին դարձեալ Հոռոմ կը գտնենք զինք, ուր հայերէն լեզուն եւ գրականութիւն կը դասաւանդէ Քհնյայ. Ուրբանեան Վարժարանին մէջ. միաժամանակ իրրեւ հմուտ լատինագէտ, Ս. Թոմասի Կաճառին մէջ լատիներէնի ուսուցիչ կը կարգուի: Խորապէս տիրացած էր ան լատիներէնի. շատ դիւրութեամբ կրնար քերթուածներ շարադրել Վերդելիոսի եւ Որատիոսի վրեժ լեզուով:

1908ին կը ստանան Հոռոմի Քհնյայ. Լեւոնեան Հայ Կղերանոցի Մեծաւորութեան պաշտօնը: 1911ին կը ձեռնադրուի Եպիսկոպոս Տրապիզոնի: Նոյն տարին կը մասնակցի Ազգային Սիւնհոդոսին, անոր ամենէն գործունեայ անդամներէն մէկը հանդիսանալով:

Կ'անցնէ Տրապիզոն: Արդէն իսկ մեծ է իր համբաւը. բարեկրօն քահանայ, հրժուտ ուսուցիչ, պերճախօս քարոզիչ, ճարտար վարիչ եկեղեցական գործերու եւ հիմա նաեւ վեհանձն Հովիւ մը, որ կը



ԳԵՐՊՈՒ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔ. ՆԱԶԼԵԱՆ
Ս. Ղազարի պարտէզին մէջ, 1936ին

յաջողի քիչ ժամանակուան մէջ ծաղկեցընել իր թեմը առաքելական կաղապարակութիւններով. դպրոց, աղքատախնամ եւ կուսաստան:

1920ին, Գերպո՛. Նազլեան՝ սարսափելի արհաւիրքներէն ճղակոտոր հայ բեկորները հաւաքելու եւ Հայ Կաթողիկէ Նուիրաբեռութիւնը վերակազմելու պատասխատու պաշտօնը կ'ընդունի Ս. Աթոռէն, իրրեւ Առաքելական Այցելու եւ Ընդհ. Փոխանորդ Պատրիարքութեան: Թուրք կառավարութենէ կը ճանչցուի իրրեւ Հայ Կաթողիկէ Ազգապետ: Մեծ կ'ըլլայ հոն իր ազգասէր գործունէութիւնը. հայրա-



ԳԵՐՊՇ. ՊԵՏՐՈՍ ԱՐՔԵ. ՔԵՏԻՃԵԱՆ

մէնուն համակրանքը և ամէնուն հանդէպ
ցոյց տուած է հայրական դուրգուրոտ
ինամբ մը, որուն շատեր դեռ մինչեւ օրս
երախտապարտ են:

1936ին կ'անուանուի Պատրիարքական
Փոխանորդ: Նոյն տարուան Նոյեմբերին
տեղի կ'ունենայ եպիսկոպոսական օծումը
մեծ շուքով Պէյրուսի մէջ: Այնուհետեւ
եռանդով կը նուիրուի Պատրիարքական
գործերուն, որոնց համար ունէր թէ՛ մեծ
պատրաստութիւն և թէ՛ պահանջուած բո-
լոր ձիրքերը:

1937ին կը վախճանէր Ամեն. Արքիա-
րեան Կաթողիկոս: Քիչ վերջ Պատրիար-
քական աթոռը կը բարձրանար Ամեն.

Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճան-
եան, ապագայ Ծիրանաւորը: Ու
Քէտիճեան Գերապայծառ կը մը-
նայ իր Փոխանորդական բարձր
պաշտօնին մէջ: Ութը տարի շա-
րունակ թանկաւերն աջակիցը
կ'ըլլայ Ամեն. Կաթողիկոսին և
սիրուած ու փնտռուած դէմք մը
ամբողջ Պէյրուսի մէջ: Դժբախ-
տաբար անողորմ հիւանդութիւնը,
սրտի տկարութիւնը տակաւ կը
սկսի յայտնուիլ:

1945ին կը ստիպուի թողուլ
Պէյրուսը և հրաժարիլ իր պաշ-
տօնէն: Կ'անցնի Հռոմ և հոն կը
ստանձնէ Քէնյայ. Լեւոնեան Հայ
Կղերանոցի Մեծաւորութիւնը,
միաժամանակ նշանակուելով
Ձեռնադրիչ Եպիսկոպոս Հայ Ժէ-
սի: Արեւելեան Ս. Ժողովը բարձր
զնահատանքով զինք կ'անուանէ
նաեւ խորհրդական. միաժամա-
նակ կը վարէ նաեւ Պատրիարքա-
կան Գործակալի փափուկ պաշ-
տօնը, մինչեւ մահը:

Գերպոյ. Քէտիճեան սիրոյ կա-
պերով զօդուած էր նաեւ Միա-
բանութեան: 1939ին և 1951ին
ձեռնադրած էր մեր Ուխտի Հայ-
րերը. 1951ին մասնակցած էր

Միխիթար Արքահօր մահուան երկրորդ
գարադարձի հանդէսներուն: 1951ին նա-
խագահած էր Վանքիս Հիմնարկութեան
տօնակատարութեանց:

Իր հայրական բարի սիրտը անշուշտ
հիմա երկնքէն աւելի ևս պիտի փութայ
օթանդակելու իր տառապեալ ազգակից-
ներուն. և իր բարեխօսութիւնը պիտի
տարածէ բոլորին վրայ, Հայ Կաթո-
ղիկէ Նուիրապետութեան ամէն մէկ ան-
դամին համար հայցելով Ամենակալէն ա-
ռատազեղ շնորհներ:

Օրհնեալ ըլլայ իր անոյշ յիշատակը:

Հ. Ն. Տ.

ԱՌԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

« Հո՛վ արե՛ք, սարե՛ր ջան, հո՛վ արե՛ք,
իմ դարդիս դարման արե՛ք... »:

Մեծ է դարդը Հայոց աշխարհի. լուե՛ր
է քնարը Հայոց դարդի մեծ երգիչին.
վշտի ու ցաւի աննման վարպետին: Եւ հի-
մա ո՞վ պիտի դայ անոյշ բալասանը դնե-
լու մեր մեծ վէրքին.

« Դարդս լացե՛ք, սարի սմբուլ,
Ալւան-ալւան ծաղիկներ.
Դարդս լացե՛ք, բաղի բլբուլ,
Ամպշոյ երկնոց գով հովեր »:

Աւետիք Իսահակեանով կ'անհետանայ
ահաւասիկ հայ քնարին պայծառ երրոր-
դութեան ներհուն և խոհուն վարպետը,
Յովհաննէս Յովհաննէսեանի և Թումա-
նեանի սերունդէն, յաջորդն Աղայեանի և
ընկեր Դեմիրճեաններու և Տէրեաններու:

« Էյ, Մանթաշի մաշխուն հաւքեր,
իմ դարդը որ ձերն եղնէր,
Ձեր էդ գառ-վառ խառ փետուրներ
կը սեւնային քանց գիշեր »:

Էյ, Մանթաշի մարմանդ հովեր,
իմ դարդը որ ձերն եղնէր,
Ձեր մուշ-անոյշ ծաղկանց հոտը,
Թոյն ու տօքի կը փոխէր... »:

Աւելի քան ութսունամեայ էր ան և ա-
լետը նահապետի մը նման, հին օրերու
իրեւ կենսուրախ աշուղ՝ իր շուրջ խմ-
բած էր հոյլ մը բանաստեղծներու, որոնց
բանքն իր անսպառ աղբիւր էր ան, ար-
շալոյսի մը պէս չքնաղ, որ կարծես պիտի
չունենար իր վերջալոյսը:

« Տիեզերքի պերճ հիւսուածքն » էր ան,
և « իր մէջ երկինքն էր երգում »: Ու դեռ
պիտի երգէ. պիտի երգէ յաւէտ. այո՛,
ինք « հիմա այնպէս յողնած է ու լուռ,
բայց յաւերժ կ'երգէ Հայրենի աղբիւր »:
Կ'երգէ սէրը ասպետին, սէրն յաւերժա-



կան. կ'երգէ նաեւ Աբու Լալա Մահարին
մեռելական:

Հոկտեմբեր 17ին, մինչ Երեւանի ձայ-
նասփիւռը կը հաղորդէր տխուր լուրն աշ-
խարհի, կ'իրականանար սիրոյ ասպետին
երազը չքնաղ.

« Եւ քեւ առան, քոսն օրեր ու տարիք,
վառ կտրիմը դարձաւ դողող մի ծերուկ.
Ու երբ մահը դուռը բախեց զարհուրիկ,
Հանեց ծոցէն վարդը խամրած ու դալուկ:
Սիրու վարդը աչքին դրեց փափաքով,
Ու համբուրեց վերջին անգամ, ու մեռաւ՝
Հոգին լցած բլբուլների երգերով »:

Արեքսանդրապոլի զաւակ էր ան, ծնած
Հազարապատ գիւղը, այժմ Իսահակեան,
1875ին: Գրադէտ կնոջ մը մօտ կը սորվի
այրուրեքներ. կը յաճախէ ծխական դպրոց
և հուսկ Արեքսանդրապոլի պետական
վարժարանը: